## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Պետրովկայի համայնք, գ. Պետրովկա
հեռ. 094-20-52-61

№ Հ/ 00-56

<<01>> Սեպտեմբերի 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից գրությամբ Ձեզ ենք ներկայացնում Պետրովկա համայնքի ավագանու թիվ 11-Ա որոշումը կից հավելվածով:

ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔ

գ. ՊԵՏՐՈՎԿԱ 094 20-52-61
- petrovka.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07»Օգոստոսի 2017 թվականի N 11-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պետրովկա համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Պետրովկա **համայնքի ավագանին որոշում է.**

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | [signature] | | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՀԱՐ | [signature] | | |
| ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ | [signature] | | |
| ՊՈՂՈՅԱՆ ԶԱՎԵՆ | [signature] | | |
| ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ | [signature] | | |

Պետրովկա համայնքի ղեկավար՝ [signature] Հ.Գրիգորյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Պետրովկա համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 7--ի N11-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Պ ԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Սուքիասյան Հայկուհի - 10.000 (տասը հազար) դրամ,

2) Սարգսյան Սյուզաննա - 20.000 (Քսան հազար) դրամ,

3) Հարությունյան Արշավիր -20.000 (քսան հազար) դրամ

4) Սուքիասյան Շիրակ - 15.000 (տասնը հինգ հազար)դրամ

5) Սարգիսով Ռաֆայել - 10.000( տասը հազար) դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 75 000 (յոթանասուն հինգ հազար ) դրամ:

Պետրովկա համայնքի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար՝

Մ.Պողոսյան